ԻՆՉՊԵ՞Ս ՀԵՌՈՒ ՄՆԱԼ ՍՏՐԵՍԻՑ

Երջանկության կերտվածքը (Փիլիպպեցիս)
Մաս 7 - Փիլիպպեցիս 4:6-13

«Եվ Աստծու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի:» Համար 7

1- Հրաժարվիր հոգս անելուց

«Ոչնչի համար մի՛ մտահոգվեք...» Փիլիպպեցիս 4:6

Հիսուսն ասաց

- Հոգս անելը անխոհեմություն է

«Մի՛ հոգացեք ձեր կյանքի համար, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք, ոչ էլ ձեր մարմնի համար, թե ի՛նչ պիտի հագնեք: Չէ՞ որ կյանքն առավել է, քան կերակուրը, և մարմինն առավել է, քան հագուստը:» Մատթեոս 6:25

- Հոգս անելը անբնական է

«Նայե՛ք երկնքի թռչուններին, որոնք ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ շտեմարանների մեջ ամբարում, և ձեր երկնավոր Հայրը նրանց կերակրում է: Չէ՞ որ դուք առավել եք, քան նրանք:» Մատթեոս 6:26

«Եվ հագուստի համար ինչո՞ւ եք հոգում. նայե՛ք վայրի շուշաններին՝ ինչպե՛ս են աճում. ո՛չ ջանք են թափում, ո՛չ էլ մանում: Ասում եմ ձեզ, որ նույնիսկ Սողոմոնը իր ամբողջ փառքի մեջ նրանցից ոչ մեկի պես չհագնվեց:» Մատթեոս 6:28-29

- Հոգս անելը անօգուտ է

«Ձեզանից ո՞վ կարող է հոգալով իր հասակի վրա ևս մի կանգուն ավելացնել:» Մատթեոս 6:27

- Հոգս անելը անտեղի է

«Իսկ եթե դաշտի խոտին, որ այսօր կա, բայց վաղը հնոցն է գցվում, Աստված այդպես է հագցնում, որքա՛ն առավել ձե՛զ կհագցնի, թերահավատնե՛ր:» Մատթեոս 6:30

«Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՛ գցեք, որովհետև նա ձեզ հոգ է տանում:» Ա Պետրոս 5:7

2- Խոսիր Աստծո հետ ամեն ինչի մասին

«Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն:» Փիլիպպեցիս 4:6

«Ցանկանում եք, բայց չունեք, որովհետև չեք խնդրում:» Հակոբոս 4:2

«Նա, որ իր Որդուն էլ չխնայեց, այլ մեզ բոլորիս համար նրան մահվան մատնեց, ինչպե՞ս նրա հետ մեզ ամեն ինչ չի շնորհի:» Հռովմայեցիս 8:32

3- Շնորհակալ եղիր Աստծուց ամեն ինչի մեջ

«...գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն:» Փիլիպպեցիս 4:6

«Ամեն բանում գոհությո՛ւն հայտնեք, որովհետև սա է ձեր հանդեպ Աստծու կամքը Քրիստոս Հիսուսով:» Ա Թեսաղոնիկեցիս 5:18

4- Մտածիր լավ բաների մասին

«Ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ անարատ, ինչ որ սիրելի, ինչ որ բարեհամբավ, առաքինի և գովելի, ա՛յն մտածեք:» Փիլիպպեցիս 4:8

«Հաստատուն միտք ունեցողին դու պահում ես կատարյալ խաղաղության մեջ, քանզի քեզ է հուսացել:» Եսայիա 26:3

5- Բավարարված եղիր ամեն ինչով

«Ես սովորել եմ բավարարվել նրանով, ինչի մեջ որ կամ. գիտեմ կարիքի մեջ ապրելն էլ, առատության մեջ լինելն էլ. ամեն բանում ամեն ինչի տեղյակ եմ՝ թե՛ կշտանալուն, թե՛ քաղցելուն, թե՛ առատությանը, թե՛ կարիքին:» Փիլիպպեցիս 4:11-12

«Հանդարտ սիրտը բժշկություն է մարմնի համար, իսկ նախանձը փտություն է ոսկորների համար:» Առակաց 14:30

«Ավելի լավ է մի բուռ հանգստությամբ լի, քան թե երկու բուռ՝ տքնանքով և քամուն հետապնդելով:» Ժողովող 4:6

Ինչպե՞ս

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով:» Փիլի 4:13

«Աստծուն հնազանդվի՛ր և խաղաղության մե՛ջ եղիր նրա հետ. դրանով քեզ բարիք կգա:» Հոբ 22:21

Հաջորդ Քարոզի Թեման:
«Աստծո Խոստումը Առատաձեռն Մարդու»
Հովիվ Սարօ Խաչիկեան